ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2017թվականի N 977

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 783 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի ղեկավարի 2017 թվականի սեպտեմբերի 26-ի «Ինքնակամ կառուցած ավտոտնակի նկատմամբ Հրազդան համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու մասին» N 783 որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.
1)Որոշման վերնագրում «ավտոտնակի» բառից հետո կարդալ «և ավտոտնակի օժանդակ շինության» բառերը:
2)Որոշման 1-ին կետում «ավտոտնակը» բառից հետո կարդալ «և 37.66քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակի օժանդակ շինությունը» բառերը:
3)Որոշման 1-ին կետի «34.76քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը» բառերը փոխարինել «34.94քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակը» բառերով:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 նոյեմբերի 2017թվականի N 978

ՍԱՄՎԵԼ ՍԵՅՐԱՆԻ ԱԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԺԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, 26-րդ կետի, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ » Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի, 219.1, 275-283-րդ 305 հոդվածների և հիմք ընդունելով Հրազդան համայնքի ղեկավարին առընթեր վարչական հանձնաժողովի 2017 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 18-րդ արձանագրությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Սամվել Սեյրանի Ալոյանին /Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ ք. Սևան, Կարմիր Բանակի փողոց 54-րդ 35 բնակարան /ենթարկել վարչական պատասխանատվության՝ նշանակելով տուգանք 200 000/ երկու հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2.Տուգանքը պետք է վճարվի սույն որոշումը իրավախախտում կատարած անձի կողմից ստանալուց ոչ ուշ քան տասնհինգ օրվա ընթացքում՝ 900125001488 հաշվարկային հաշվին:
3.Վճարումը սահմանված ժամկետում չիրականացնելու դեպքում գումարը կգանձվի Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:
4.Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:
5.Սույն որոշումն անբողոքարկելի է դառնում այն ստանալու պահից 2 ամիս հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ՀԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2017թվականի N 979

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 175-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 176-Ն որոշումն՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումները՝

1.Ծախսային մասում՝

1. 1 բաժնի 1 խմբի 1 դասի 51 ծրագրի, «Կոմունալ ծառայություններ» /4213/ հոդվածում «1000.0» թիվը փոխարինել «1200.0» թվով, «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» /4111/ հոդվածում «138610.0» թիվը փոխարինել «138410.0» թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 նոյեմբերի 2017թվականի N 980

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2002 թվականի մարտի 5-ի «Քաղաքացիական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) N ՀՕ-309 օրենքի 7-րդ հոդվածի բ) և 12-րդ հոդվածի դ) կետերի կիրարկումն ապահովելու և արտակարգ իրավիճակներում ու ռազմական դրության ժամանակ համայնքի տարածքում տեղակայված օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների կազմակերպման նպատակով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ստեղծել արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողով (այսուհետ՝ ԳԿԲ հանձնաժողով):

2.Հաստատել՝

1)արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների ԳԿԲ հանձնաժողովի կազմը՝ համաձայն N1 հավելվածի:

2)արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների ԳԿԲ հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն N2 հավելվածի:

3) համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի միջոցառումների աշխատանքային տարեկան պլանի օրինակելի ձևը:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահում եմ ինձ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

Հավելված 1
Հրազդան համայնքի ղեկավարի
2017թվականի նոյեմբերի 24-ի
N 980որոշման

ԿԱԶՄ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/հ	ԱԱՀ	Պաշտոնը	Պաշտոնը հանձնաժողովում	Նշումներ
1.	Տիգրանյան Գեղամ	Համայնքի ղեկավարի տեղակալ	Հանձնաժողովի նախագահ	
2.	Գարեգինյան Մարգպետ	Համայնքի ղեկավարի խորհրդական	Հանձնաժողովի նախագահի տեղակալ	
3.	Գաբրիելյան Անահիտ	Համայնքի ղեկավարի օգնական	Հանձնաժողովի քարտուղար	
Հանձնաժողովի անդամներ՝				
4.	Տիգրանյան Սամվել	Էներգո և ջրամատակարարման համակարգի ԳԿԲ խմբի ղեկավար		
5.	Ստեփանյան Գագիկ	Կապի և տրանսպորտի ԳԿԲ խմբի ղեկավար		
6.	Հուսիկյան Հրաչյա	Կառավարման համակարգի ԳԿԲ խմբի ղեկավար		
7.	Կոստանյան Մյասնիկ	Վերականգնողական աշխատանքների նախապատրաստման և անցկացման ԳԿԲ խմբի ղեկավար		
8.	Օհանյան Սամվել	Բնակչության պաշտպանության կազմակերպման և նրա կենսագործունեության ապահովման ԳԿԲ խմբի ղեկավար		
10.	Գրիգորյան Սամվել	Նյութատեխնիկական մատակարարման և տնտեսական կապերի ԳԿԲ խմբի ղեկավար		
11.	Մարգարյան Պետիկ			

12.	Խաչատրյան Շոթա			
13.	Գևորգյան Արմեն			
14.	Մարտիրոսյան Ալվարդ			
15.	Միքայելյան Գեղամ			
16.	Այվազյան Արմեն			

Հավելված 2
Հրազդան համայնքի ղեկավարի
2017թվականի նոյեմբերի 24-ի
N 980որոշման

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն կանոնադրությունը սահմանում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) հիմնական խնդիրները, գործառույթները և աշխատանքների կազմակերպման կարգը:

2.Հանձնաժողովը ստեղծվում է արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տնտեսության ԳԿԲ միջոցառումների կատարման կազմակերպման, պլանավորման և համակարգման նպատակով և հանդիսանում է մշտապես գործող կազմակերպչական, խորհրդակցական և հետազոտական մարմին:

3.Հանձնաժողովը ստեղծվում է համայնքի ղեկավարի որոշմամբ:

4.Հանձնաժողովը կազմավորվում է համայնքի վարչակազմի և կազմակերպությունների (օբյեկտների) ներկայացուցիչներից:

5.Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Հանձնաժողովի հիմնական խնդիրներն են՝

1) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ համայնքի տարածքում տեղակայված տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների մշակում, կազմակերպում և իրականացում,

2) արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ կոմունալ-էներգետիկ և այլ ծառայությունների գործունեության արագ վերականգնմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում:

2. Հանձնաժողովի գործառույթներն են՝

1). Խաղաղ ժամանակ՝

ա. տնտեսության օբյեկտների վիճակի վերլուծության անցկացման կազմակերպում՝ արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ դրանց կայուն գործունեության հնարավորության որոշման նպատակով,

բ. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքների կազմակերպում,

գ. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների պլանավորման կազմակերպում,

դ. ռազմական գործողությունների ընթացքում տնտեսության օբյեկտների կորուստների նվազեցմանն ուղղված միջոցառումների նախապատրաստման և իրականացման կազմակերպում,

ե. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների գործունեության վերաբերյալ համայնքի ղեկավարի համար վերլուծական և վիճակագրական նյութերի նախապատրաստման կազմակերպում,

զ. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման նպատակով օբյեկտների տեղաբաշխման կազմակերպում,

է. արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման համար պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, զինվորական կառավարման մարմինների և կազմակերպությունների միջև փոխգործողության կազմակերպում,

ը. համայնքի տարածքում տեղակայված կազմակերպությունների ԳԿԲ հանձնաժողովներին մեթոդական և կազմակերպական օգնության ցուցաբերում,

թ. տնտեսության օբյեկտների գործունեության կայունության բարձրացման ուղղությամբ սահմանված կարգով համապատասխան առաջարկությունների ներկայացում համայնքի ղեկավարին,

ժ. իր իրավասությունների շրջանակներում այլ հարցերի քննարկում արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման ոլորտում.

2). Ռազմական դրության ժամանակ

ա. ռազմական դրության և ռազմական դրության արտակարգ իրավիճակներում տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության հավաքի և վերլուծության կազմակերպում,

բ. ռազմական գործողությունների ընթացքում տուժած տնտեսության օբյեկտների վիճակի վերաբերյալ տեղեկատվության հավաքի և վերլուծության կազմակերպում,

գ. ռազմական գործողությունների ընթացքում տուժած կոմունալ-էներգետիկ և այլ ծառայությունների գործունեության արագ վերականգնմանն ուղղված միջոցառումների կազմակերպում և իրականացում,

դ. ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների կայուն գործունեության ապահովման ուղղությամբ սահմանված կարգով առաջարկությունների ներկայացում համայնքի ղեկավարին,

ե. իր վրա դրված խնդիրների լուծման շրջանակներում այլ գործառույթների իրականացում:

8. Հանձնաժողովն իր իրավասությունների շրջանակում իրավունք ունի՝

1). սահմանված կարգով հարցում անել և պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններից և կազմակերպություններից ստանալ անհրաժեշտ նյութեր և տեղեկատվություն,

2). սահմանված կարգով իր աշխատանքներին ներգրավել գիտնականներին, փորձագետներին և մասնագետներին,

3).հանձնաժողովի անդամների թվաքանակից ստեղծել ենթահանձնաժողովներ և աշխատանքային խմբեր և սահմանված կարգով նրանց աշխատանքներին ներգրավել գիտնականներին, փորձագետներին և մասնագետներին, ինչպես նաև պետական կառավարման մարմինների և շահագրգիռ կազմակերպությունների ներկայացուցիչներին,

4). մասնակցել արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտներում ԳԿԲ հարցերով նպատակային ծրագրերի և այլ իրավական ակտերի նախապատրաստման աշխատանքներին և պատրաստել առաջարկություններ դրանց իրականացման վերաբերյալ,

5). մասնակցություն ցուցաբերել ՔՊ ուսումնավարժությունների և վարժանքների, արտակարգ իրավիճակներում և ռազմական դրության ժամանակ տնտեսության օբյեկտների ԳԿԲ հարցերով գիտահետազոտական աշխատանքների անցկացմանը:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.Հանձնաժողովի գործունեության կազմակերպումը ապահովում է նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

10.Հանձնաժողովի կանոնակարգը հաստատվում է հանձնաժողովի նախագահի կողմից՝ սույն կանոնադրության պահանջների համաձայն:

11.Հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է տարեկան աշխատանքային (հիմնական միջոցառումների) պլանին համապատասխան, որը մշակվում է հանձնաժողովի և հաստատվում համայնքի ղեկավարի կողմից, և եռամսյա պլաններին համապատասխան, որոնք մշակվում են հանձնաժողովի և հաստատվում հանձնաժողովի նախագահի կողմից:

12.Հանձնաժողովի նիստերը անցկացվում են ըստ անհրաժեշտության, բայց եռամսյակը մեկ անգամից ոչ պակաս:

13. Հանձնաժողովի հերթական պլանավորված նիստի օրակարգի, ամսաթվի, ժամանակի, անցկացման վայրի մասին նրա անդամները պետք է տեղեկացված լինեն ոչ ուշ, քան ենթադրյալ անցկացման օրվանից 7 օր առաջ:

14. Հանձնաժողովի նիստն անցկացնում է նախագահը կամ նրա հանձնարարությամբ՝ իր տեղակալը:

15. Հանձնաժողովի նիստը համարվում է լիիրավ, եթե ներկա է անդամների կեսից ավելին:

16. Հանձնաժողովի անդամները անձամբ մասնակցում են նիստերին, առանց փոխարինման իրավունքի: Հանձնաժողովի անդամներից որևէ մեկի բացակայության դեպքում նիստին քննարկող հարցերի վերաբերյալ նա իրավունք ունի իր կարծիքը ներկայացնել գրավոր ձևով:

17. Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստերին կարող են հրավիրվել պետական կառավարման տարածքային մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչներ, գիտնականներ, փորձագետներ և մասնագետներ:

18. Հանձնաժողովի որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ՝ հանձնաժողովի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Քվեարկության ժամանակ ձայների հավասարության դեպքում վճռական է հանձնաժողովի նիստը նախագահողի ձայնը:

19. Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են արձանագրություններով, որոնք ստորագրվում են հանձնաժողովի նիստը նախագահողի և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

20. Հանձնաժողովի նախագահը՝

1) ղեկավարում է հանձնաժողովի գործունեության կազմակերպումը և ապահովում պլանավորումը,

2) բաշխում է պարտականությունները հանձնաժողովի նախագահի տեղակալի և հանձնաժողովի քարտուղարի միջև,

3) հաստատում է հանձնաժողովի նիստի օրակարգը,

4) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի նիստի օրակարգում հարցեր ներառելու վերաբերյալ,

5) ծանոթանում է հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,

6) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

7) նախագահում է հանձնաժողովի նիստերին,

8) նշանակում է ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի ղեկավարներին, որոշում նրանց կազմը և խնդիրները,

9) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,

10) ստորագրում է հանձնաժողովի փաստաթղթերը, այդ թվում նիստերի արձանագրությունները,

11) կատարում հանձնաժողովի որոշումները:

21. Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝

1) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի նիստի օրակարգում հարցեր ներառելու վերաբերյալ,

2) ծանոթանում է հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,

3) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

4)իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,

5) կատարում հանձնաժողովի որոշումները,

6) կատարում հանձնաժողովի և հանձնաժողովի նախագահի հանձնարարականները,

7) կատարում է հանձնաժողովի նախագահի պարտականությունները, այդ թվում նախագահում է հանձնաժողովի նիստերին (հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում) նրա հանձնարարությամբ,

8) ղեկավարում է հանձնաժողովի կողմից ստեղծվող ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի գործունեությունը,

9) մասնակցում է հանձնաժողովի նիստերին հարցերի նախապատրաստմանը և քննարկմանը:

22. Հարձնաժողովի քարտուղարը՝

1) մասնակցում է հարցերի նախապատրաստմանն ու քննարկմանը և հանձնաժողովի նիստի օրակարգի կազմմանը,

2) ծանոթանում է հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,

3) մասնակցում է հանձնաժողովի նիստերին,

4) իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,

5) ստորագրում է հանձնաժողովի նիստերի արձանագրությունները,

6) կատարում է հանձնաժողովի որոշումները,

7) կատարում է հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները,

8) իրականացնում է հանձնաժողովի գործունեության կազմակերպական և տեղեկատվական վերլուծական ապահովումը,

9) ապահովում է հանձնաժողովի գործավարությունը,

10) կազմակերպում է հանձնաժողովի նիստերի նախապատրաստումը,

11) տեղեկացնում է հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի անդամներին և նիստերի հրավիրված անձանց հանձնաժողովի նիստի ամսաթվի, ժամանակի, անցկացման վայրի և օրակարգի մասին, ուղարկում փաստաթղթեր, դրանց նախագծերը և այլ նյութեր, որոնք հանձնաժողովի նիստի ժամանակ ենթակա են քննարկման:

23. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի նիստի օրակարգում հարցեր ներառելու վերաբերյալ,

2) ծանոթանում են հանձնաժողովի կողմից քննարկվող հարցերի նյութերին,

3) մասնակցում են հանձնաժողովի նիստերին,

4) իրավունք ունի ներկայացնել առաջարկություն հանձնաժողովի իրավասությունների շրջանակում գտնվող հարցերի շուրջ,

5) կատարում են հանձնաժողովի որոշումները,

6) կատարում է հանձնաժողովի և նրա նախագահի հանձնարարականները,

7) մասնակցում են հանձնաժողովի կողմից ստեղծված ենթահանձնաժողովների և աշխատանքային խմբերի գործունեությանը,

8) մասնակցում են հանձնաժողովի նիստերին հարցերի նախապատրաստմանը և քննարկմանը:

24. Հանձնաժողովի որոշումները հանձնաժողովի քարտուղարի կողմից ուղարկվում են հանձնաժողովի նախագահի տեղակալին, հանձնաժողովի անդամներին և շահագրգիռ անձանց հանձնաժողովի նիստի անցկացումից հետո մեկ շաբաթվա ժամկետում:

25. Հանձնաժողովի գործունեության կազմակերպա-տեխնիկական ապահովումը կատարվում է օրենքով սահմանված կարգով՝ համայնքի վարչակազմի կողմից՝ տեղական բյուջեի միջոցների հաշվին:

Հաստատում եմ՝

Հրազդան համայնքի ԳԿԲ

Հանձնաժողովի նախագահ_____

«24» Դեկտեմբեր 2017թ.

ՊԼԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017__ԹՎԱԿԱՆԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Հ/հ	Միջոցառման անվանումը	Կատարողներ, համակատարողներ	Ով է ներգրավվում	Կատարմ. ժամկետը	Նշումներ
1	2	3	4	5	6
Կազմակերպական և գործնական միջոցառումներ					
1	Մեթոդական օգնության ցուցաբերում համայնքի տարածքում տեղակայված կազմակերպությունների գործունեության կայունության բարձրացման (ԳԿԲ) հանձնաժողովների աշխատանքային պլանների մշակման ուղղությամբ (օբյեկտային)	Մարզային փրկարարական վարչության (ՄՓՎ), (ԳԿԲ) հանձնաժողով	Մարզային փրկարարական վարչության, կազմակերպությունների ԳԿԲ հանձնաժողովների նախագահներ (օբյեկտային)	Տարվա ընթացքում	
2	Համայնքի տարածքում տեղակայված կազմակերպությունների գործունեության կայունության բարձրացմանն ուղղված միջոցառումների պլանի մշակում	Մարզային փրկարարական վարչության, համայնքի ԳԿԲ հանձնաժողով	Կազմակերպությունների ԳԿԲ հանձնաժողովների նախագահներ (օբյեկտային)	Տարվա ընթացքում	
3	Մասնակցություն արտակարգ իրավիճակների վերացման համար նյութական ռեսուրսների և քաղաքացիական պաշտպանության համար պաշարների ստեղծման աշխատանքի կազմակերպմանը	Քաղաքապետ, համայնքի ԳԿԲ հանձնաժողովի նախագահ, ՄՓՎ պետ,	Համայնքի ԳԿԲ հանձնաժողով, մարզային փրկարարական վարչության,	Տարվա ընթացքում	
4	Մասնակցություն արտաքին հակահրդեհային ջրամատակարարման	Քաղաքապետ, համայնքի ԳԿԲ հանձնաժողովի	ՄՓՎ, քաղաքի հրդեհային և տեխնիկական	Տարվա ընթացքում	

	աղբյուրների վիճակի բարելավման աշխատանքի կազմակերպմանը և իրականացմանը	նախագահ	անվտանգության տեսչություն, կազմակերպություններ		
5	Մասնակցություն շտաբային և հրամանատարաշտաբային ուսումնավարժություններին «Տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունները համայնքի տարածքում ԱՒ հետևանքների վերացման ուղղությամբ. ՔՊ ղեկավար կազմի աշխատանքը քաղ.պաշտպանությունը խաղաղից ռազմական դրության փոխադրելու ժամանակ» և այլ թեմաներով	Քաղաքապետ, համայնքի ԳԿԲ հանձնաժողովի նախագահ, ՄՓՎ պետ	ՄՓՎ, հերթապահ դիսպետչերական ծառայություններ, կազմակերպություններ	Տարվա ընթացքում	
6	Տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը պետական կառավարման մարմինների կողմից անցկացվող (տեսակոնֆերենսային ֆորմատով) խորհրդակցություններին	Քաղաքապետ, համայնքի ԳԿԲ հանձնաժողովի նախագահ, ՄՓՎ ,	Համայնքի ԳԿԲ հանձնաժողովի նախագահ, ՄՓՎ պետ, , կազմակերպությունների ղեկավարներ	Տարվա ընթացքում	
Համայնքի տարածքում տեղակայված կազմակերպություններիԳԿԲ հանձնաժողովի նիստեր					
1	1.Համայնքի ԳԿԲ հանձնաժողովի աշխատանքի արդյունքների ամփոփում և խնդրադրում հաջորդ տարվա համար 2.Համայնքի տարածքում տեղակայված ՔՊ պաշտոնական կառույցների պատրաստականության բարձրացման մասին	Համայնքի ԳԿԲ հանձնաժողովի նախագահ, ՄՓՎ ,	Կազմակերպություններ	Տարվա ընթացքում	
2	1.Պահուստային էներգոմատակարարման ինքնաբավ աղբյուրներով ապահովելու մասին 2.Արտաքին հակահրդեհային ջրամատակարարման աղբյուրների վերականգնման աշխատանքների ընթացքի մասին	Համայնքի ԳԿԲ հանձնաժողովի նախագահ, ՄՓՎ ,	Համայնքի ԳԿԲ հանձնաժողովի անդամներ, կազմակերպություններ	Տարվա ընթացքում	

Հրազդան համայնքի ԳԿԲ

հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

ՈՐՈՇՈՒՄ

27 նոյեմբերի 2017թվականի N 981

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Կենտրոն թաղամասում գտնվող 500.0քմ մակերեսով 0445-0001 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն թաղամաս, Սահմանադրության հրապարակ 71/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2017թվականի N 982

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ բաժնի պահանջների.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասում գտնվող 180.0քմ մակերեսով 0517-0002 ծածկագրով հողամասին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Միկրոշրջան թաղամաս, Պուրակային փողոց 2/1:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 նոյեմբերի 2017թվականի N 983

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24 կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 26 կետի 2-րդ ենթակետի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքին պատկանող Միկրոշրջան թաղամասի Պուրակային փողոց 2/1 հասցեում գտնվող 180.0քմ ընդհանուր մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողերից փոփոխել հասարակական կառուցապատման:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2017թվականի N 984

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՄԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի որոշմամբ հաստատված հավելվածը և քաղաքի թվով 47 /քառասունյոթ/ անապահով բնակիչների դիմումները՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի «Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 175-Ն որոշմամբ հաստատված բյուջեի հավելվածում «Սոցիալական հատուկ արտոնություններ այլ դասերին չպատկանող» /4729/ հոդվածով նախատեսված ծախսերից 1780000 /մեկ միլիոն յոթ հարյուր ութսուն հազար/ դրամ հատկացնել Հրազդան քաղաքի թվով 47/քառասունյոթ/ անապահով բնակիչների:
2.Հանձնարարել ֆինանսական բաժնին կատարելու նշված վճարումը:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ *ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2017թվականի N 985

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հրազդան համայնքի ղեկավարի կարգավորման առարկան.
Քաղաքացի Լիլիկ Սարուխանյանը հանդիսանալով գույքի սեփականատեր, և տվյալ գույքի համար օրենքով նախատեսված հարկի/ հողի հարկ, գույքահարկ/ վճարող սուբյեկտ, խախտելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, ժամանակին չի կատարել օրենքով իր վրա դրված հարկը վճարելու պարտավորությունը:
Ըստ հարկման բազայում առկա տվյալների՝ Լիլիկ Սարուխանյանը հանդիսանում է ք. Հրազդան Կոստանյան փողոց 24 տան հասցեում գտնվող հողի սեփականատեր:
Ըստ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ 2017 թվականի հունիսի 27-ի դրությամբ Հրազդան համայնքի բյուջեի նկատմամբ վերջինիս վճարման ենթակա պարտքը կազմում է 40 361- ՀՀ դրամ, որից ապառք՝ 28 668 -ՀՀ դրամ, տույժ՝ 11 693 -ՀՀ դրամ:
Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի հուլիսի 27-ին հրավիրվել են վարչական լսումներ:
Քաղաքացին պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:
Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-րդ մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:
Ղեկավարվելով վերոգրյալի պահանջներով, հիմք ընդունելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22,29.1 հոդվածները:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Լիլիկ Սարուխանյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջե գանձել -ՀՀ 40 361-դրամ , որից՝ հողի հարկի գծով ապառք՝ 28 668 -ՀՀ դրամ, տույժ՝ 11 693 -ՀՀ դրամ:
2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, << Վարչարարության հիմունքների և

վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում: 4.Գանձված գումարը ենթակա է վճարման հողի հարկի դեպքում՝ 900125001017 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2017թվականի N 986

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հրազդան համայնքի ղեկավարի կարգավորման առարկան.
Քաղաքացի Վարազդատ Աթոյանը հանդիսանալով գույքի սեփականատեր, և տվյալ գույքի համար օրենքով նախատեսված հարկի/ հողի հարկ, գույքահարկ/ վճարող սուբյեկտ, խախտելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, ժամանակին չի կատարել օրենքով իր վրա դրված հարկը վճարելու պարտավորությունը:
Ըստ հարկման բազայում առկա տվյալների՝ Վարազդատ Աթոյանը հանդիսանում է ք. Հրազդան Կոստանյան փողոց 20 տան հասցեում գտնվող հողի սեփականատեր: Ըստ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ 2017 թվականի հունիսի 27-ի դրությամբ Հրազդան համայնքի բյուջեի նկատմամբ վերջինիս վճարման ենթակա պարտքը կազմում է 70347- ՀՀ դրամ, որից ապառք՝ 48177 -ՀՀ դրամ, տույժ՝ 22170-ՀՀ դրամ:
Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի հուլիսի 27-ին հրավիրվել են վարչական լսումներ:
Քաղաքացին պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:
Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-րդ մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն: Ղեկավարվելով վերոգրյալի պահանջներով, հիմք ընդունելով << Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22,29.1 հոդվածները:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Վարազդատ Աթոյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջե գանձել 70 347 ՀՀ դրամ, որից՝ հողի հարկի գծով ապառք՝ 48 177 ՀՀ դրամ, տույժ՝ 22 170 ՀՀ դրամ:
2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4.Գանձված գումարը ենթակա է վճարման հողի հարկի դեպքում՝ 900125001017 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 նոյեմբերի 2017թվականի N 987

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հրազդան համայնքի ղեկավարի կարգավորման առարկան.
Քաղաքացի Միրամարգ Գալստյանը հանդիսանալով գույքի սեփականատեր, և տվյալ գույքի համար օրենքով նախատեսված հարկի/ հողի հարկ, գույքահարկ/ վճարող սուբյեկտ, խախտելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքը, ժամանակին չի կատարել օրենքով իր վրա դրված հարկը վճարելու պարտավորությունը:
Ըստ հարկման բազայում առկա տվյալների՝ Միրամարգ Գալստյանը հանդիսանում է ք. Հրազդան Կոստանյան փողոց 24 տան հասցեում գտնվող հողի սեփականատեր: Ըստ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ 2017 թվականի հունիսի 27-ի դրությամբ Հրազդան համայնքի բյուջեի նկատմամբ վերջինիս վճարման ենթակա պարտքը կազմում է 46404 - ՀՀ դրամ, որից ապառք՝ 32959 -ՀՀ դրամ, տույժ՝ 13445 -ՀՀ դրամ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի հուլիսի 27-ին հրավիրվել են վարչական լսումներ:
Քաղաքացին պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:
Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-րդ մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:
Ղեկավարվելով վերոգրյալի պահանջներով, հիմք ընդունելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22,29.1 հոդվածները:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Միրամարգ Գալստյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջե գանձել -ՀՀ 46404-դրամ , որից՝ հողի հարկի գծով ապառք՝ 32959 -ՀՀ դրամ, տույժ՝ 13445 -ՀՀ դրամ:
2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4. Գանձված գումարը ենթակա է վճարման հողի հարկի դեպքում՝ 900125001017 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017թվականի N 988

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հրազդան համայնքի ղեկավարի կարգավորման առարկան.
Քաղաքացի Վանիկ Արշակյանը հանդիսանալով գույքի սեփականատեր, և տվյալ գույքի համար օրենքով նախատեսված հարկի/ հողի հարկ, գույքահարկ/ վճարող սուբյեկտ, խախտելով << Հարկերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքը, ժամանակին չի կատարել օրենքով իր վրա դրված հարկը վճարելու պարտավորությունը:
Ըստ հարկման բազայում առկա տվյալների՝ Վանիկ Արշակյանը հանդիսանում է ք. Հրազդան Կոստանյան փողոց 28 տան հասցեում գտնվող հողի սեփականատեր: Ըստ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ 2017 թվականի հունիսի 27-ի դրությամբ Հրազդան համայնքի բյուջեի նկատմամբ վերջինիս վճարման ենթակա պարտքը կազմում է 66 864- ՀՀ դրամ, որից ապառք՝ 45 680 -ՀՀ դրամ, տույժ՝ 21 184 -ՀՀ դրամ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի հուլիսի 27-ին հրավիրվել են վարչական լսումներ:
Քաղաքացին պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:
Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-րդ մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով,և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն,փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:
Ղեկավարվելով վերոգրյալի պահանջներով, հիմք ընդունելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22,29.1 հոդվածները:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Վանիկ Արշակյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջե գանձել 66 864 -ՀՀ - դրամ , որից՝ հողի հարկի գծով ապառք՝ 45 680 -ՀՀ դրամ, տույժ՝ 21 184 -ՀՀ դրամ:
2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, << Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4.Գանձված գումարը ենթակա է վճարման հողի հարկի դեպքում՝ 900125001017 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱՍԱՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
(0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2017թվականի N 989

ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԳԱՆՁՄԱՆ ՊԱՀԱՆՋ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հրազդան համայնքի ղեկավարի կարգավորման առարկան.
Քաղաքացի Գառնիկ Արշակյանը հանդիսանալով գույքի սեփականատեր, և տվյալ գույքի համար օրենքով նախատեսված հարկի/ հողի հարկ, գույքահարկ/ վճարող սուբյեկտ, խախտելով << Հարկերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքը, ժամանակին չի կատարել օրենքով իր վրա դրված հարկը վճարելու պարտավորությունը:
Ըստ հարկման բազայում առկա տվյալների՝ Գառնիկ Արշակյանը հանդիսանում է ք. Հրազդան Կոստանյան փողոց 28 տան հասցեում գտնվող հողի սեփականատեր:
Ըստ հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի՝ 2017 թվականի հունիսի 27-ի դրությամբ Հրազդան համայնքի բյուջեի նկատմամբ վերջինիս վճարման ենթակա պարտքը կազմում է 66 864- ՀՀ դրամ, որից ապառք՝ 45 680 -ՀՀ դրամ, տույժ՝ 21 184 -ՀՀ դրամ:
Հարուցված վարչական վարույթի շրջանակներում 2017 թվականի հուլիսի 27-ին հրավիրվել են վարչական լսումներ:
Քաղաքացին պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարչական վարույթի լսումներին:
Համաձայն <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 1-րդ մասի՝ վարչական ակտն արտաքին ներգործություն ունեցող այն որոշումը, կարգադրությունը կամ այլ անհատական իրավական ակտն է, որը վարչական մարմինն ընդունել է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, և ուղղված է անձանց համար իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն, վերացնելուն կամ ճանաչելուն:
Ղեկավարվելով վերոգրյալի պահանջներով, հիմք ընդունելով <<Հարկերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22,29.1 հոդվածները:

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Քաղաքացի Գառնիկ Արշակյանից հօգուտ Հրազդան համայնքի բյուջե գանձել 66 864 -ՀՀ - դրամ , որից՝ հողի հարկի գծով ապառք՝ 45 680 -ՀՀ դրամ, տույժ՝ 21 184 -ՀՀ դրամ:
2.Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշման պահանջները չկատարելու դեպքում, <<Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով

սահմանված կարգով այն ենթակա է հարկադիր կատարման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:
4.Գանձված գումարը ենթակա է վճարման հողի հարկի դեպքում՝ 900125001017 հաշվեհամարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆ